զի առասան սոցին չէ ըստ հասարակ սովորութեանն ի քթանէ ոլորեալ, այլ ի յոստոց արմատենեաց ոլորեալ է, որ է անխզելի։

Եւ յետ երկուց աւուրց հասին ի Եամպուկ և անտի մինչ հասին առաջին քաղաքն Ռապիք՝ որ մօտ է Ճիտտէի, տաճկի ուխտաւորքն ի էհրամ մտանեն, այսինքն հանեն զպատմուճան իւրեանց, և ի վերայ շապկին արկանեն զանձամբ զեհրամն ի խստութիւն և ի ճգնութիւն, վասն մօտ լինելոյ Մէքքէի։

Արդ ի Սուվէիշէն յետ 23 աւուրց հասին ի Ճիտտէ Նոյ. 8ին։...

Յետ հասանելոյ ի Ճիտտէ գնացեալ եգիտ ոսկերչապետ զղուումճի Եանաքին որում ունէր զյանձնարարական գիրս, ետ նմա զգիրն և նա ընթերցեալ սիրով ընկալաւ զնա և սկսան խօսիլ զվաճառից քաղաքին, յորմէ յոյժ զանգատեցաւ....

Ուստի բացորոշեաց գնալ ի Հնդիկս և սկսաւ վաճառել Թովմաճանն զմերճանն բարի գնով և բարի մարդկանց։...

Յայսմ վայրի չորս և հինգ եթովպացի հապէշք եկեալ էին և ընդ Պողոս որդւոյն խօսէին արաբերէն, և հապէշքն այնոքիկ եւս տեսին զակնեղէնսն և բարեկամացան ընդ Պողոսին և ելեալ գնացին. և Թովմաճան կամէր եւս վաճառել զայն զարդն ձիոյ, այսինքն զքէսմէն, զոր ի յեգիպտոս բռնութեամբ գնեաց 808 դուրուշով, զի ի հնդիկս ոչ գործ ածեն զայն. և եհան արտաքս առ ի վաճառել։ Եւ ի եկեալ հապէշից մինն էր ծպտեալ, զի էր եղբօրորդի Թագաւորի հապէշին. ուստի ի մէջ իւրեանց ասէ այն ծպտեալն ցնոսա. Ես յոյժ հաճեցայ այն վաճառական հային. եկ գնասցուք և յայտնեսցուք զմեզ և հրաւիրեսցուք զնա և զորդին ի քաղաքն մեր, որովհետեւ զայնքան ակնեղէնս ունի, որ մեր Թագաւորին յոյժ հաճելի է, և զոսկիս բազումս տայ նմա։ Յայնժամ մինն ի նոցանէ որ իւր քահանայն էր, ասէ. Նախ գոցուք զորդի նորա զՊողոսն, նմա յայտնեսցուք զքեզ և նմա ծանուսցուք թէ հօրն իւրոյ եղեալ ակնեղէնքն յոյժ հաճելի է մեր Թագաւորին, և նա ծանուսցէ հօրն իւրում. և արարին այնպէս զի լրտեսեալ տեսին թէ Թովմաճանն չէ ի խուցն, գնացին առ Պողոս որդին, և քահանայն իւր սկսաւ ասել թէ՝ Գիտես որ մեք յոյժ սիրեմք զձեզ և կամիմք ձեզ բարութիւնս ինչ առնել, սակայն եթէ խոստանայք ոչ ումեք ասել. զի հապէշ Թագաւորի մարդիկ եմք, և սա Թագաւորի եղբօրդորդին է և անուն սորա կոչի Այդու Բիջոյ Ռաֆայէլ, և գնացաք ուխտ ի սուրբ Երուսաղէմ և այժմ դառնամք յերկիրն մեր յեթովպիա, և վասն երկիւղի մահմետականաց՝ այսպէս ծպտեալ շրջիմք և դու հօր քում պատմեա, թէ ակնեղէնքն զորս ունի հայր քո Թովմաճանն՝ մեք ահա բարեկամարար ծանուցանեմք քեզ որ յոյժ մեծագին ծախին ի քաղաքն մեր առաջի Թագաւորին, ուստի եթէ կամիք ընդ մեզ կարող էք գալ։ Եւ զայս ասացեալ ելեալ գնացին։

Եւ ի յերեկոյին յորժամ եկն հայրն, սկսաւ Պողոսն ուրախութեամբ պատմել հօրն և թէ ակնեղէնքն մեր մեծ համարի և մեծագինք են անդ (որ է սուտ, զի ոչ եւս ճանաչին անդ ակնեղէնք) և թէ է տեղի առատութեան ոսկւոյ։ Զայս լուեալ Թովմաճանին՝ սկսաւ փոքր ինչ միտիլ առ այն, բայց ասէ. Հարցցուք ոմանց։ Եւ ընդ հարցանելն խօճա Եանաքին և կամ այլոց, բնաւին ամենեւին ոչ հաճեցան, այլ մանաւանդ երկեցուցին պատմելով զնոցին բազմաղիմի կոպտութիւնս, այլ եւս թէ մինչ կամիցիք դառնալ յետս՝ ոչ թոյլ տան ասացին, և յետոյ յորժամ եկին այս հապէշքն, ինքն Թովմաճանն խօսեցաւ ընդ նոսա, և յօրմէ զորքան մերժողական և գռեհկական ինչ լուեալն պատմեաց նոցա և նոքա միաբերան ասեն ցԹովմաճանն թէ առ նախանձու ասեն, զի գիտեն թէ իրրեւ երթաս ի Հապէշ՝ մեծ ոմն լինելոց ես։ Յայնժամ և խեղճ Թովմաճանն հաւատացեալ բանից նոցին, և բորբոքեալ եհան զբոլոր ապրանս իւր, և զձիու դատիֆէու վրայ բանած քէսմէն. և ասէ Այդու Բիջոն ցԹովմաճանն։ Այս